ՎԱՀԲ ԻԲՆ ՄՈՒՆԱԲԲԻՀ (մահ. 728/734) / ԻԲՆ ՀԻՇԱՄ (մահ. 828/833)

Եմենյի Արու Արդայյահ Վահբ իբն Մունաբբիհը Հարավային Արաբիայի ավանդությունների ու դրույցների պատմող ու ասացող է: Նա ուներ պարսկական ծագում և ծնվել էր Զիմարում. Սանաայից ոչ հեռու՝ 654/655 թվականին: Նրա հայրը՝ Մունաբբիհը, ըստ ավանդության, ընդունել էր իսլամ դեռևս Մուհամմադի կենդանության օրոք: Ինքը՝ Վահբը աշխատել է որպես դատավոր Սանաա քաղաքում: Իր կյանքի վերջում, ինչ-որ պատճառով, Եմենի կառավարիչը Վահբին պատժում է մտրակի հարվածներով, որի հետևանքով նա մահանում է:

Վահբ իբն Մունաբբիհը (մահ. 728/734) առաջիններից է, որ հավաքել ու գրի է առել հին Արաբիայի (հին Եմենի) պատմությանը վերաբերող բանավոր դրույցները, որոնք սակայն առասպելախառն էին, որից հետայայում օգտվել են այլ պատմիչներ և առաջին հերթին Արդ ալ-Մալիք իբն Հիշամը (մահ. 828/833), որը վերամշակել ու խմբագրել է Վահբի «Թագերի մատյանը» երկը, որը մեզ հասել է հենց Իբն Հիշամի խմբագրությամբ:

Արու Մահամմադ Արդ ալ-Մալիք Իբն Հիշամը առավել հայտնի է որպես Մուհամմադ մարգարեի կենսագրության հեղինակ: Ասվում է, որ նրա ընտանիքը հիմյարական ծագում ուներ և Բասրայից տեղափոխվել է Եգիպտոս, որտեղ նա ծնվել ու ապրել է: Իբն Հիշամը տոհմագիտության ու քերականության վայելուն դիտակ էր: Նա մահացավ Եգիպտոսում 828 կամ 833 թվականին:

Նկարագրությունը կատարված է հետևյալ բնագրից. Wahb ibn Munabbih, Kitab attijan fi muluk Himyar, ed. Krenkow, Haydarabad, 1347 (1928).

(*Encyclopaedia of Islam, Wahb ibn Munabbih, R. G. Khoury, v. XI, pp. 33-36, Ibn Hisham, W. Montgomery Watt, v. III, pp. 800-801,* Х. А. Р. Гибб, Арабская литература, Москва, 1960, стр. 123-124)